

ԶՄԻՒՆՈՒ 15 ՀՈՍԵՄԲԵՐ 1862

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԳԻՆ՝ 3. 50 ՂՇ. ՀԱՏԸ. ՈՂԶ

ԴՐՈՍԱՆ ասայժ ասանակիւզ օրը հեղ ին էր հրատարակուի : Տարեկան գինն է 2 արծաթ մեծիս , և լէց անուանը 2 արծաթ մեծիս ԿԱՆԻՒԿ : Ճամբոն ծախին սարսափրոտոշին լրայ



ԹԵՐԻ ԲԱՆՍՈՒՐԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԱՐԺԻՔՐ. Ե. Ե. 23

Մարդկային պարտքերը թուելու զանազան սկզբունքներ կան : Գուցէ չափազանց չի սեպուի ըսելը , որ ամէն տեսակ պարտք՝ աւելի կամ նուազ վարպետութեամբ մ' արդէն հաստատուած պարտքէ մը կրնայ ածանցիլ , և աս կերպով՝ եղած են խելացի մարդիկ որ զան արդարութեան պարտքէն ածանցած են , և այլք ումանք խաղաղութեան պարտքէն : Յայտնի բան է ուրեմն որ աս պարտուց դասակարգութիւնը մեր առարկային նպաստող նիւթ մ'ըլլալուն զէշ չիպիտ' ընենք Փալէյի (1) Մարդկային պարտուց բաժանմանց հակելու , որն որ , ամէն բարոյախօս հեղինակ ընդհանրապէս ընդունած է :

Մարդկային պարտուց վրայ խօսելով , պիտի ցուցնենք նախ՝ թէ ինչ է մարդուս պարտքը առ անձն , և երկրորդ՝ ինչ է մարդուս պարտքը առ ընկերն : Հոս թիւրիմացութեան տեղի չկտալու համար հարկաւոր է

նշանակելը , որ ասոնց մէկը՝ իր անձին դէմ պարտք մ'է , և միւրը՝ այլոց դէմ պարտք մը , ո՛չ միայն ինքզինքին և ուրիշներուն փոխադարձաբար երջանկութիւն պատճառելու միտումն ծագած , այլ՝ դիպուածական հանդամանքներու մէջ թէ իր և թէ այլոց գործողութեանց կամ հակամիտութեանց արտաքին նպատակներէն , որոնք որ կը սահմանագրեն զպարտքը : Ինքզինքնուս դէմ ունեցած պարտքերնիս կոչած վարքերնէս առաջ եկած բարեաց մեծագոյն մասը՝ ուրիշներու ազէկ ընելու համար ինքզինքնիս աւելի կարողացնելէս կ'ըզդանք . և ասոր համար ուրիշներու դէմ ունեցած պարտքերնուս գործադրութեամբը անոնց պատճառած երջանկութիւննիս՝ մեր պարտուց և համակրութեան զգացմանց զոհուողութեամբը ինքզինքնիս ալ երջանիկ կ'ընենք , որով որ այլոց մեր վրայ ունեցած բարի կամքն ալ կ'սպասողեմք :

Ա. Մարդուս իր անձին դէմ ունեցած պարտքն ընդհանրապէս այն է , որ իր Ստեղծողին իրեն ձեռքը աւանդած կեանքը պահպանէ . և իր ձեռքէն եկածին չափ աշխատի որ իր մտաւորական կարողութիւնը մշակէ՝ որուն աէր կացուցած է զինք :

Աս պարտքին առաջին մասը բոլորովին բացասական է : Մարդս պէտք է յուսկալ ըլլայ , ինքզինք վտանգի մէջ ձգելու անպարկեշտութենէ , կամ ուրիշ խօսքով , պէտք է խոնձ ըլլայ , և անխառնախառն ետ կենայ :

Ինչու որ երբ մարդ կը սորվի որ Աստուած այս ստեղծած աշխարհը ընդհանուր երջանկութիւնը արդիւնաւորելու պատշաճ տեսաւ , կը սորվի նոյն հետայն որ կեանքը՝ այս նըպատակին համար արուեստաւ . և ինքզինք յիմարաբար վտանգի մէջ ձգելով , կամ իր բուն կենացը դէմ բռնաբարութիւն բանեցնելով , Աստուծոյ առարկան ալ պղծելու կը հակի : Ինք իր ձեռքը կ'ընկրկէ երջանկութեան հասնելու միջոցները՝ որոնցմով Աստուած ուղեց որ հասնի անոր , և աս կերպով ուրիշներու երջանկութիւնն աւելցնող միջոցներն ալ կը կործանէ :

Մարդուս իր անձին դէմ ունեցած պարտքին երկրորդ մասին նկատմամբ՝ որ իր մտաւորական կարողութիւնը , կամ ուրիշ կերպով ըսելով՝ իր իմացական և բարոյական գոյութիւնը արդիւնաւորելու կ'ակնարկէ , մտամբ մը դրական է և մասամբ իւրեք բացասական : Մարդուս պարտքն է , թէ ուսմամբք և թէ բարի՝ տրամադրութեանց մշակութեամբքը ինքզինք կատարելագործելը , որ կը թուութիւն ըսուած գործողութեան ամենէ ընդարձակ նշանակութիւնն է : Իր պարտքն է նաև զգացական անչափութեամբք իր բարքը չի վտաճարացնելը : Այս մտութիւնները , որոնցմէ ինքզինք պիտի պաշտպանէ՝ ընդհանրապէս երկու են , ջանկո-թիւն և անձո-թիւր-թիւն , որոնց ետքինը երկուքի կը բաժնուի , այն է արբէ-յող-թեան և որխորածող-թեան : Այս

¹Dr PALEY. The Elements of Morals.

յանկութիւն և անժուժկալութիւն ըստեաժ երկու մոլութեանց դէմ կեցող երկու առաքինութիւնները ըստ Գասարո-նի-նն և Ժո-ժի-ալ-նի-նն են : Աս երկու առաքինութեանց մշակութիւնը, կամ ասոնց դէմ ըլլող երկու մոլութիւններէ ետ կենալը՝ սչ միայն մարդու աղէկ ըլլալուն համար պատուիրուած է, այլ և անոր համար որ ուրիշներու ֆիաս հասցընելու պատիժէն ալ կոյս կը տրուի :

Բ. Մարդու՝ առ այլ ունեցած պարտուց վրայ խօսելով, երկու կերպով պիտի ստորաբաժնենք. պարտք ընդդէմ մարդոց ընդհանրապէս իբրև մարդիկ, և պարտք ընդդէմ մարդոց իբրև անդամք նոյն ընկերութեան : Այս վերջինները դարձեալ կրնան ստորաբաժնու մեծ ունեան, որպէս, պարտք մարդոց ընդդէմ անդամոց մի և նոյն քաղաքական ընկերութեան կամ վիճակի, և պարտք մարդոց ընդդէմ անդամոց մի և նոյն ընտանեաց :

1. Մարդոց պարտքը ընդդէմ ընդհանրապէս մարդոց, կամ ընդդէմ մարդկութեան, սա հետեւեալ բարերար-նի-նն կամ բար-նի-նն, չաջարար-նի-նն, միտր-նի-նն, և խոնարհ-նի-նն ընդհանուր անուններով պէտք է իմացուի : Բարերարութեան կամ բարութեան մէջ պէտք է իմացուի նաև համակր-նի-նն, կամ ընդհանուր հակամիտութիւն մեր ընկերաց օգնելու : Գիտ-նի-նն կամ բարութիւնը ընդդէմ անոնց որ խղճութեան մէջ կամ մեղմէ ստորին են, առաքայե-նի-նն կամ պարգևար-նի-նն, որ մեր ունեցած վաստակը՝ ուրիշներու օգտակար ընելու հակամիտութիւնովն իս, դիտութիւնը գործքի դրած կ'ըլլանք : Արարար-նի-նն, որչար-նի-նն կամ ուրիշներու վիճակը բարութեամբ դատելու հակամիտութիւնը : Համակրութեան, պիտութեան, առատաձեռնութեան, երախտադատութեան, ողորմութեան հակառակ եղող մոլութիւնները՝ Անխար-նի-նն, չարար-նի-նն կամ անգիտ-նի-նն, ագահ-նի-նն, անբարար-նի-նն և չարար-նի-նն կամ անողորմ-նի-նն են : Օրարար-նի-նն՝ դիտուող կերպ

մի է, որուն մէջ վերոյիշեալ վերջինը իր չարութեան հակամիտութեամբ կը տիրէ : Բարերար-նի-նն անունով ճանչցուած առաքինութեանց մշակութիւնը, և անոնց դէմ եղած մոլութիւններէ խոյս տալը, ուրիշներուն երջանկութեան վրայ զգալի և անմիջական ներգործութիւն մը կ'ընէ : Աս ալ չի մոռցուի, որ բարե-սէր մարդու մը երջանկութիւնը կ'աւելնայ իր համակրութեան բնական զգայմանց դոճուհակութիւններէն, և ուրիշներու բարիք ընելով՝ կը հակամիտէ զուրիշները որ իրեն բարութիւն ընեն :

Բարերար-նի-նն՝ երբ մեր բարեսիրութեանը կ'օգնէ, արժանաւոր բան մ'է : Պէտք չէ որ մարդ խիստ պղտիկ առարկայի մը համար, իր քաջասրտութեան չափն անցնելով ինքզինք մեծ վտանգներու դիմադրու վիճակի մէջ ձգէ, հետեւաբար պէտք է որ խոհեմութեամբ կտաւարուի : Ոմանք քաջասրտութիւնը խոհեմութեան մէկ կերպը կը սեպեն, սրն որ անտեղի է : (Շարունակելի) :

Մին ի ՄԱՅՆԱԿ

Մինչ երկուրն անձրնիչ հառաչ,
Խորատու երգք մտաշի ընդ առաջ՝
Ըրի իմ զգեմու այլ իմն է կանակ,
Հիճեմով թէ եմ մէն և մայրակ :
Առնունտ տերև խամբեալ վայրաթափ,
Յանկունտն հեղուկ ծրփի 'ի ջրափ :
Չէր ինձ մարթ լինել տերև՝ զի մեռաց
Ասանց յիշելու էր ճիւղի վըշտաց :
Անտաք և հոգմունք և համայն ըտեպ՝
Ընդուն իսկ կըրկնն զմեծութունն ըլ զէպ :
Սարուեմ, երևոյն մինչ պլանայ արձակ,
Լամ յանշարտ թէ եմ մէն և մայրակ :

ՊԱՏԱՍԻԱՆ

Ամէն աստ զու, Են և միայնակ
Անբարեկամ կաս և գեթ անպիտակ,
Մտապիտակ իցես զանուն իւր անեղ,
Իր վիճակ քեզ ետ ըլ գեմա քո եհեղ :
Ոչ ծան իւր լստի՝ հողմն երկուրին,
Ոչ նովու շողմն աստեղք աղօթին,
Ի՞ր երբէք տերև զի կեայ և խամբի՝
Թ՛ Այանն համատես չիցէ գիտելի :
Իւրաբանիւր յոյս և ան շողմիկ,
Առանձինն հեճեճ, և արտոտ մընիկի
Ամենակարող Տէր ծանօթ է իբեղ :
Եւ զու ասեո թէ մէն փայտի էս :

Անգղիականէ :

Վերոյիշեալ բանասիրութիւնը, վերջին թոռով յիշուածն է : Սոյն Բարգիւնութեան մէջ որոնս որ իջոյնս իր փառ-նի-նն պահելոյնս : Բայց Անգղիականէն անոր-նի-նն անկարելի էր որ պատի :

ՊԼ. ԵՐԲՈՒՓՔԱՅ
ՀԱՄԼԵԹ

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Գաշտագեանին մէկ աւելի բաշուած կողմը :
Հոգիս ու հասկնս՝ Կրէն էք միտն :

Համ. Բ'սէ, իս ուր պիտի տանիս.
Ես՝ ալ աւելի անգին չեմ երթար :

Հոգ. Ի՛ս մտիկ ըրէ :

Համ. Պիտի աղէկ :

Հոգ. Ժամանակս դրեթէ հասած է,
որ ինքզինքս ծըծմբային ու չա-
րակոշկած բոցերուն աւանդեմ :

Համ. Ա՛ւաղ, թշուառ Հոգի :

Հոգ. Իս մի մեղքնար, այլ՝ քեզ
իմացնելիքներուս մտադրութեամբ ա-
կանջ կախէ :

Համ. Խօսէ, ես մտիկ կ'ընեմ :

Հոգ. Ա՛հա, վրէժ պիտ' առնես՝
թէ որ մտիկ ընես :

Համ. Ի՛նչ :

Հոգ. Ես քու հօրդ հոգին եմ՝ որ
գիշերները, որոշուած ժամանակի մը
մինչև լրանալը ժուռ պալու կարգեալ
եմ. ու ցորեկներն ալ՝ ծով պահելով

կրակներուն դատապարտուած կը բան-
տարկուիմ, մինչև որ կենդանութեանս
օրերը զործուած մեղքերը, այրին
ու քաւուին : Բայց սակայն իմ բան-
տարանիս զաղանիքը քեզ յայտնելու
հրաման չունիմ, միայն թէ քեզ մէկ
բան մը պատմեմ, որու ամենաչնչին
խօսքը՝ սիրտդ կը խնչալանէ, ու մա-
տաղեոց արիւնդ կը ստեցնէ. քու
երկու աչքերդ՝ աստղերու պէս, ի-
րենց պարունակաց մէջ կը պլտուա-
ցընէ, ու չնորհասիս և քանքրահեր
խոպոպիքդ՝ անճուռնի ողնիին փուշե-
րուն նման կը քոտմնեցնէ. սակայն,
աս յաւիտենական յայտնութիւնը՝ միս
ու արիւն ունեցող ականջաց չիպիտի
հասնի. մտիկ ըրէ, մտիկ ըրէ,
ս'հ, մտիկ ըրէ, թէ որ երբէք քու
սիրելի հայրդ սիրած ես նէ :

Համ. Ո՛հ, Աստուած իմ :

Հոգ. Իւր ամենանդուծ ու ամենա-
չար մարդասպանէն վրէժ առ :

Համ. Մարդասպանէն :


Հոգ. Ա՛յո, ամենաչար մարդաս-
պանէն. որ կրնամ ըսել, իրացնէ
ամենաչարն անողորմն ու ամենանդու-

լալ: Ասոր սպայոյց անցեալ օր կը պնդէին որ 'ի Յէնջ, յերկինս և ճանեաբառերը գտած են: Բ. Պատկերազարդ է: Գ. Մէկ երեւելի յատկութիւնն ալ սա է որ պործածողը ինչ բառ որ փնտռէ՝ իր քմայը համեմատ նշանակութիւն կը գտնէ, ոչ միայն բառին պործածութեանը, իմաստին, առմանը և զանազան պարզանքներուն վրայօք, այլ և սր լեզուէ որ ուզէ նոյն լեզուով բառին ամէնէն ընդարձակ նշանակութեամբը տեղեկութիւններ կը գտնէ խիոյն:

Տէրը ծերայած ըլլալով, մէկ կէտէ պին կը պահանջէր, կարծելով որ ծախէ նէ կը պատանենայ. բայց հիմայ 1 Համբեր-ի-ն կը պահանջէ:

Հաստ ածան:

— Բայ նորալուր տարածայնութեանց, կը լսեմք և կը հաստատեն մեզ որ նոր ընկերութիւններ պիտի հաստատուին ազգային օրակերներու աւելի բանկայ միջոցներ շնորհելու, վասն զի անոնց մեծազոյն մասին աւնունները՝ անխօս նիւթերէ և անշնչաւորներէ ըլլալով՝ մեծ ազդեցութիւն մը չեն ըներ եղեր: Սոյն ընկերութիւնները պիտ' աշխատին եղեր որ կամ այժմեան թերթերուն անունը փոխել տան կամ այսուհետեւ ելլելիքներուն այնպիսի անուններ գնել տան որ խօսքերնին բանող ըլլայ, որ սա հետեւեալ անուանց պէս. թագաւոր, պաշտօնակալ, իշխան, բռնակալ, զօրապետ, իշխանապետ, լորտ, փաշա, ազա և այլն:



— Քանի մ'անձինք ստուգել կ'ուզեն մեզ որ Գժոխքը վարձու է տըրուեր, և ոմանք այլք թէ ծախուեր է:

Հրեշտակն ձի մը:

Հայազգի Պարոն մը պատիւ ունի ծանուցանելու յարգոյ հասարակութեան, որ իւր հետը բերած է այս քաղաքը ողջ ձի մը, որուն առջևի աջ ոտքը չիկայ 'ի ծնէ, և զոր 'ի ցոյց հանած է

Քեզար փողջը: Մատամ ձիջի տան զիմացի խանութը:

Մտաք, երբն ձերմոյ քան բարանոյ: Բայ, ամէն օր, արքունիքէ փնէն իրիւն:

Ազգային գրաւոր հանգստեան կուուց հանգես: ԱՐԻՒՆԱՔՐԵՌԻ ՊԱՏԵՐԱԶՄ Ի Քէ Մէջ մը հայի Հաստիս և Գառն Հոյս սովորի Բերբերու: ՊԱՏԵՐԱԶՄԱԿԵՏ՝ - ՅՕՒԱԲԱՅԻՆՍ ԱՐՇԻՊԵՂԱԴՈՍԻ

Վաստեջ եւ դասեջջ ճանաչան պաշտօններ են. ու ի յարու հանգստի բաներ: ՀԵՐՄՈՒՐ. ՎԵՆ. ՎԱՃ:

Կը վերաբերցնեմք մեր ընթերցողները՝ առաջնոյն 457 և 466 թիւերուն և երկրորդին՝ 13 և 17 թիւերուն, որոնց մէջ պիտի տեսնեն սոյն պատերազմին մանրամասն պատրաստութիւնները, ուժը, կացութիւնը և յառաջագիմութիւնը: Այս պատերազմը ակներևաբար բանակադաւ (strategy) խորհելու և ոմբակոծելու պատերազմ չըլլալով՝ պատուակոծելու կոխ մ'է կ'երեւի, վասն զի առանց ձեռքերնին մնասող զէնք առնելու՝ իրենց արհեստուն զօրութեանը կը դիմեն և բարեբաղդաբար արհեստակից ըլլալով երկուքն ալ իրարու չի մնասող գրիչ կը ցուցնեն: Մէկը գրիչը կը վերցնէ՝ un, deux, trois, չէ՛ չ'ըսէ, միւսը գրիչը կը վերցնէ՝ un, deux, trois, . . . cheese!!! կ'ըսէ, նորէն կ'ըսիսի գործողութիւնը, 1. 2. 3. . . չէ՛, միւսն ալ 1. 2. 3. . . բի՛ղ. մէկը կ'ըսէ, միւսը մի՛ղ. մէկը վի՛ղ, միւսը՝ աբի՛ղ, կը վախցուի որ բի՛ղ, մի՛ղ, վի՛ղ, ըսելով վերջը ի՛նչ չի չիլէ: Աս պղտըի չիզը թէ և ինքնիրենը անմեղ է, բայց տես որ իր չարաչար պործածութեամբը կոխ կը յարուցանէ. ինչպէս որ ատենօք Գաղղիացոյ մը և Անասուլիի մը մէջ տեղ ծագած է սա հետեւեալ կերպով: Անասուլիի՝ Գաղղիացոյն ժամ՝ քանին ըլլալը հարցնելով cinq heures («էն չէօր») պատասխան կ'անէ: Ուրիշ անգամ ալ դարձեալ՝ ուրիշ Եւրոպայիք, ասանկ վրիպիմացմամբք (misunderstanding) դանազան կը ունենան հանդպած են; ինչպէս սա հետեւեալներուն մէջ: seigniez beaucoup, il fait beaucoup mieux, these are very dear boots &c.

Հիմայ սոյն կոխն ալ աս տեսակի մօտ կոխի մը դառնայ նէ, իրարու դէմ՝ յարուցած յօգուածներուն խելք հասցուր: (Թէոր ասոնց պարունակած ամէնմէկ զրեբը մէյմէկ զինուոր սեպուէր՝ մէկը պիտ' աշխատէր որ

միւսէն երկայն գրէ, բայց թէոր ամէն մէկ զիր մէյմէկ մնալութեանց սկզբնատառերու տրուեր, մէկը պիտ' աշխատէր որ միւսէն կարճ գրէ: Անայժմ իրենց վերջին յօգուածոց ամէնէն մերձաւորական ու համեմատական հաշիւը մեր ընթերցողաց առջև կը դնեմք՝ ի ստոր, իմացնելով որ Սեճմուան 598 բառ և 3125 զիր գործածեր է ու Գարունը 941 բառ և 4438 զիր գործածեր է, որիէ 3125ը հանելու ըլլամք 1313 թիւերը կը գտնեմք, զորս զիրերու փոխադրեմք՝ ահա՛ պիտի կարգամք: Սեճմուա թ. 466 Գարուն թ. 17

Ա	340	Ա	693
Բ	40	Բ	43
Գ	69	Գ	59
Դ	1	Դ	68
Ե	33	Ե	239
Ղ	51	Ղ	76
Է	370	Է	469
Ը	90	Ը	122
Թ	99	Թ	88
Յ	7	Յ	44
Ի	344	Ի	270
Լ	467	Լ	443
Խ	8	Խ	47
Ճ	3	Ճ	52
Կ	23	Կ	446
Տ	44	Տ	83
Ճ	00	Ճ	8
Ղ	43	Ղ	44
Մ	25	Մ	21
Մ	128	Մ	436
Յ	59	Յ	77
Ն	204	Ն	388
Շ	29	Շ	23
Ո	95	Ո	340
Չ	23	Չ	36
Ս	105	Ս	37
Շ	00	Շ	47
Ն	2	Ն	49
Ս	91	Ս	440
Վ	43	Վ	39
Մ	158	Մ	120
Բ	207	Բ	350
Գ	00	Գ	22
Լ	453	Լ	281
Փ	2	Փ	48

բ	62	բ	50
և	00	և	56
օ	61	օ	29
ֆ	45	ֆ	00

Վերոգրեալները մենք ժամանակ չունենալուս արժանահաւաս ու պատուաւոր անձանց համբերել տուած ենք :

Թէոր, ինչպէս որ վերն ըսինք, ամէն մէկ գիր մէյմէկ բառի սկզբնա-

տաւը սեպեղով՝ ֆ գիրը ֆալէլէլ իմացուէր՝ Գարունը ես բնաւին չու- նիմ պիտ' ըսեր, բայց Ա գիրը առա- քինութեան տեղ առնելով՝ ես Մէճ- մուային դրեթէ երկու անդամն ու- նիմ պիտ' ըսեր. դարձեալ թէոր Ջ գիրը ջանք տեղ առնուէր, Մէճմուան ես բնաւ չունիմ պիտ' ըսեր, բայց Մ գիրը մաշալայի (մաշա Ալլահ) տեղ առնելով՝ շատ ունիմ պիտ' ը-

սեր : Ալ աս փեղցիեղ հաշիւներով՝ զուգակշիւը թող հասարակութիւնն ընէ :

Մեղք կ'ըլլայ մեղք թէոր ամէն կերպով աշխատինք որ ազդերնիս պարտեղ մը ձևանայ, որու մէջ ամէն կերպ կոխները մշակելու կ'աշխա- տիմք :



ԲՈՒՍՏԵՐԱԿՐՈՒԹԻՒՆ

Տեղեկութիւն կարգագիտական

Իննէոս իր դրութեան քսան ու չորս կերպ կարգերուն հիմ բունեց՝ ա- նէջներուն իրարու հետ և պրոքին (Pistil) հետ ունեցած յարաբերու- թիւններուն ցուցուցած յատկութիւն- ները : Իւր երեքտասան նախընթաց կարգերէ՝ պրոքը բաղկացնող և իրար- մէ ազատ եղող յոսարաններու (Ovaire) կամ սիւնիկներու (Style) թուոյն հա- մեմատ դասերու բաժնած է. մոնոգին- թեան (Monogynie) մէջ, պորտը՝ միայն մէկ պրոքան (Carpelle) ունի, կամ շատ պտղարաններ, որոնք իրենց ձուա- րաններովը և սիւնիկներովը մէկ մարմին

բաղաւով միացած են. կրկնակն-թեան (Digynie) մէջ, երկու ձուարան կ'ըլ- լայ կամ երկու զատ սորաեր. եռա- կն-թեան (Trigynie) մէջ՝ երեք. քա- աակն-թեան (Tetragynie) մէջ՝ չորս. հնգակն-թեան (Pentagynie) մէջ՝ հինգ. վեցակն-թեան (Hexagynie) մէջ՝ վեց. բազմակն-թեան² (Polygynie) մէջ՝ տա- սը թիւէն աւելի : — Չորեքտասանե- րորդ³ կարգը՝ երկու դասի բաժնուած է. մերկասերմութեան (Gymnospermie), ուր սր պորտը չորս հատ միդդէ (A- kène) կը բաղկանայ, որոնք մերկ սեր- մերու պէս են. և անօխսերմութեան, (Angiospermie) ուր որ սերմերը պա- տիճի (capsule) մը մէջ պարունակու- ած են : Հնդեռասաներորդ⁴ կարգը՝ խորխուս-որ կ'ըսուի (siliqueuse), երբոր պատուղը իր լայնութենէ երեք անգամ աւելի երկայն է. 16ր, 17ր, 18ր, 19ր, 20ր, 21ր, 22ր կարգերը⁵, ա-

նէջներուն և սիւնիկներուն կապուու- թեան և թուոյն վրայ հաստատուած դասերն ունին. — 19ր կարգը կը բաժնուի կառասար Բազմամոն-թեան, ուր դ լիսիկին (capitale) կենդրոնական ծաղիկները՝ առէջապարտաւոր (Stami- no-pistillées) են, և բոլորտիքը ե- ղածները պորտաւոր և բեղնաւոր. կեղծ Բազմամոն-թեան, ուր բոլորտիքի ծաղիկ- ները պորտաւոր են և անբեր. և կարևոր Բազմամոն-թեան, ուր որ կենդրոնի ծաղիկները առէջաւոր են, և բոլոր- տիքն եղածները պորտաւոր ու բեղ- նաւոր. — 23ր կարգը կը բաժնուի փեայից-թեան, երկաթեղն-թեան, եռա- բեղն-թեան. — 24ր կարգը կը բաժ- նուի յարպիւրներու (fougères), լուսերու (mousses), ջրային մամուռներու (Al- gues), և անխիլիկներու (Champignons) :

ԺՈՒՍԻՑՈՅԻ ԲՆԱԿԱՆ ՈՃԸ

ԱՆՇԱՔԻԼԻՔ	1 Անշաքըլութիւն	Acotyledonio	Մնկենի	Fungus.	
ՄԻԱՇԱՔԻԼԻՔ	Առէջք ընդունարանին վրայ ղետեղուած	2 Սենաստարանկնութիւն	Monohypogynie	Վարսակ	Avena-
	Առէջք բաժակին վրայ ղետեղուած	3 Մենաստարանակնութիւն	Monoperigynie	Հիրիկ	Iris.
Ծաղիկք անթերթք	Առէջք ձուարանին վրայ ղետեղուած	4 Մենամակակնութիւն	Monoepigynie	Խուրըճ	Orchis.
	Առէջք ձուարանին վրայ ղետեղուած	5 Մակառէջութիւն	Epistamie	Սընոկին	Aristolochia.
Ծաղիկք միաթերթք	Առէջք բաժակին վրայ ղետեղուած	6 Շրջառէջութիւն	Peristamie	Թրթիջուկ	Rumex.
	Առէջք ընդունարանին վրայ ղետեղուած	7 Ստարանակէջութիւն	Hypostamie	Բանի	Plantago.
Ծաղիկք միաթերթք	Պակ " բաժակին " ղետեղուած	8 Ստարանակէջութիւն	Hypocorollie	Մուկ Մորմ	Belladonna.
	Պակ " ձուարանին " ղետեղուած	9 Պարառապակութիւն	Pericorollie	Չանգակիկ	Campanula.
Ծաղիկք բազմթերթք	Առէջք ձուարանին վրայ ղետեղուած	10 Բակակից Մակապակութիւն	Epicorollie	Տերտուկ	Centaurea-
	Առէջք ընդունարանին վրայ ղետեղուած	11 Անքակակից Մակապակութիւն	Epicorollie	Թանթրուէնի	Sambucus.
Ծաղիկք առէջաւորք և ծաղիկք պորտաւորք զանազան բուսայ վրայ	Առէջք բաժակին վրայ ղետեղուած	12 Մակաթերթութիւն	Epipétalie	Ստեպլին	Daucus.
	Առէջք ձուարանին վրայ ղետեղուած	13 Ստարանթերթութիւն	Hypopétalie	Հրանուկ	Ranunculus.
	Առէջք բաժակին վրայ ղետեղուած	14 Պարառաթերթութիւն	Péripétalie	Երագենի	Fragaria.
	15 Չանազանառէջութիւն	Dioline	Եղեճ	Urtica.	

1. Monandrie, Diandrie, Triandrie, Tétrandrie, Pentandrie, Hexandrie, Heptandrie, Octandrie, Ennéandrie, Décandrie, Dodécandrie, Icosandrie, Polyandrie.

2. Լիննէոսի Զօրինակագրին մէջ. (Ե. 31.) Բազմակնութեան և Գաղտնակնութեան (Polygamie, Cryptogamie) պիտ'ըլլայ :

3. Didynamie.
4. Tétradynamie.
5. Monadelphie, Disdelphe Polyadelphie, Syngenesie, Gynandrie, Molécie, Diécie.

ԱԶԳԱՅԻՆ

— Մեծ ուրախութեամբ

կըլծմբ որ վեհնայի ազգային տպարանի մէջ Աշխարհաբառ լեզուի Քեթականութիւն մը տպուելու վրայ է, աս աշխատասիրութիւնը կըպսակէ ազգութեան բաղձացած նպատակներէն մէկը, որմէ շատոնց զբոլուած էր: Արանի թէ շուտով ըմնալով կարելի եղածին չափ ածան դին մը զրուէր վրան, որպէս զի այլազգախօս խըղձացեալ հայերու քսակին հպելի ըլլար: Բայտ Գիմակին, շատ ուրախալի լուր է այս. երանի թէ ընդհանուր կերպով ազգին մէջ ջերմ ընդունելութիւն մը գտնելով՝ ամէն մարդ զուտ աշխարհաբար խօսելու աշխատէր: Գուսալ պէտք է նաև որ այս քերականութեան տուած կանոններուն հետևի պիտի անշուշտ ամէն ազգային օրագիր, ըստ որում անոց ամէն մէկը առ այժմ իր մասնաւոր զրուութեան ոճն ունի:

Թէ որ վեհնայի վանքը, ամէն գպրոց ունեցող Հայաբնակ քաղաքներու, ըստ ժողովրդեան թուոյն, համեմատական օրինակներ խրկելու ըլլայ ձրի՝ թէ ինքը կը վաստիկ և թէ ազգը:

Հեպեալը կը խնդրուիս Երաբարակել: Սուրբ Արուսազեմայ միարան արժանապատիւ Լսայի վարդապետը Ս. Տեղեաց արևանկար պատկերները աշխատասիրած է հանելու ամէն զիրքով, գեղեցիկ, յստակ և մեծ ճշգրութեամբ. որոց մէջ կան նաև խոշորացոյցով տեսնուելու համար: Սոյն պատկերները որոնք արժանապատիւ վարդապետին սոյն արհեստին մէջ ունեցած յաջողակութեան մեծ արացոյց են և որոնք հաւատացեալ ժողովրդեան առջև մեծ յարգ ստանալին յուսալի է՝ կը ծախուին վասպուրական թանգարանը ածան գնով:

252525252525

— Հեպեալ Կաղարակոյցութիւնը խնդրուած էն մեր քարեկաթէն Երաբարակել: Ի իվրիու 22 հոկտ. ը. Ն. 1862
Ըրդոյ խմբագիր
Մեցու Հանդեսին 171 թուոյն մէջ

Յաւերթագորի դէմ նախատանօք զըրածը կարդացի: Կը զարմանամ որ անոր խմբագիրը քանի որ հաճկաստան կը գտնուի, և մանաւանդ, իր մօտիկիւր-Ռեան դէմ զրուածին չի պատասխանելով՝ հիմայ ելեր զէնք չունեցող զինուորի դէմ կամ քունի մէջ եղող Յաներժահարսի դէմ կը պատերազմի, կարծելով թէ Յաւերժահարսը Ամերիկա չուած է: Սակայն, եթէ Յաւերժահարսը մինչև անգամ Չինաստան չուէ՝ դարձեալ Սեղուի պէս անիրաւ ու ոչինչ ճճի մը կընայ ջանջախել:

Կաղարակելու ուշ մի թողուր և առաջին ելելիք թիւերէդ մեկուն մէջ գիր. եթէ չես հրատարակեր, մէկ ուրիշիմը մէջ հրատարակել տուր աճապարելով կը գրեմ. վաղը Մանջեագեռ պիտի դառնամ, մնամ ևս

Ս. Փոփոխական

Վերջիշեալ նամակին մէջ յարգոյ Փոփոխականը՝ մեր ընտրուութեան թուղացի էր որ պերճացնէք զայն. բայց աւելի ազգի սեպեցնիք նոյն պահելը: Թէ որ բան մ'աւելցնել ուղկնք, պիտ'ըսէիք որ ծառիկէք մեր ժողովուրդէն, մերձ Դի երու՛ւրայն" (ՄԱԿ) եր սնունք և բնօրէ: Բայց վերջիշեալ նամակը բաւական սեպելով աս կտորը մտքէ աւելցնել չուղկուս, զանց ըսիք:

Կ. Պօլոյ Բարիէ Գ'Օրիանի մէջ ազգային Սահմանադրութեան համար հրատարակուած ուրախալի լրոյն վըրայօք՝ մեր մասնաւոր թղթակցը կ'իմացնէ մեզ որ անհիմն է:

Ճ.ՆՈՒՆԻՔ

Հոկտեմբեր		
7	Տիկին Մհ. Յ. Ղարաբաղլեան	Արու
"	" Մնաք Մեհ. մնցի	"
8	" Սա. Գրիգորեան (նաւալար)	Եգ
11	" Պօղ. Խորասանձևան (հարձ)	Արու
14	" Կարապետ Համասիսցի	"
"	" Ստեփան Չեղիկեան	Եգ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ

Հոկտեմբեր	
14	Մալախ Մարգիս, ընդ դասեր Մահտեօի Յօհաննէսի Ղամբուրեան:

ՄԱՀՔ

Հոկտեմբեր	
2	Կարապետ Տիգրանակերտցի:
5	Մարիամ Չիլճիա Մկրտչեան:
6	Աւետիք Բերեթմէճեան:
7	Տիկին Եղնարեթ Մ. Յ. Բարաբաշեան
8	Որդի Արայ Մարգիս
13	Կարապետ Մանիսացի

ԱՆՅԺԱՄԱԿԱՆ

Գերմանիոյ մէջ մի նոր հընարք մը դառն, որ օսլայի և բորակային թթուի խառնուրդը՝ վառօղի տեղ կը բռնէ: Կ'ըսուի թէ իր ընկեցական զօրութիւնը՝ հասարակ վառօղին ուժէն աւելի է. և որովհետև երկու նիւթերը իրարու չի խառնուած պայթիւն չի կրնար առաջ դալ, անոր համար դործածութիւնը աւելի ապահով և յարմար կու գայ: Ֆլ. օ. օ. 1-:

— Գաղղիոյ Մէնթ - Լթիէն քաղաքին արտին մէկին մէջ, քանիմը բանուորներ երբոր տան մը հիմնարկութեան համար գետինը կըփօթէին, Հոռմալեցոց զանազան հին ստակներ դառն, Աս ստակներէն մէկը այնքան նոր էր, որուն վրայ կը տեսնուէր Վ. Կապաղիանոսի կերպարանքը, որ Վ. Լ. 69 էն մինչև 79 կայսր էր Հռովմայեցոյ:

Ill, Lon. News.

— Պիթովէն (Beethoven) սովորութիւն ունէր որ վեհնայի մօտերը ծառի մը շուքին տակ կ'երթար կը նստէր ու իր աճշտական մտածութիւնները կ'ընէր: Սոյն ծառին տեղը՝ ի յիշատակ վերջիշեալ երևելի աժըշտագէտին, ժողովուրդը երևելի յիշատակարան մը պիտի կանգնէ:

Fl. O. O. Un.

— Համեմատութիւն 'ի մէջ զուեոց և աճշտական ձայնից: Haydn Գերմանացի երևելի աճշտագէտը կ'ըսէ, որ Աւագափողը (Trombone) խիստ կարմիր է. Փողը (Trompette) ծխրանեղոյն. Պարզափողը (Clarinetto) նարնջագոյն, Սրափողը (Hautbois Oboé) դեղին. Խրճափողը (Bassone, Fagotto) խիստ գեղին. Արինդը (Flauto) երկնագոյն կապոյտ, Չայնաչափը (Diapason) խիստ կապոյտ. Եղջերափողը (Corno) մանիշակագոյն, Վիելկը կամ Քնարիկը կամ Չուլիակը (Violino) հրազոյնն է. Վիելը (Viola) վարդագոյն. Սառաբաղինը (Violoncello) կարմիր. և Բաւբաղինը (Coutra-basso) շառագոյն: (Notes & Queries)

ՀԱՊԱՐԵԱԼ Ի ԴՈՐՄԱՍՆՆ ՏԵՏԵԱՆ
Թ. 50, ՐԵՇԵՏԻՆՔ ՌԱՍՏԻՆՔ, ՀԱՅՈՑ ԹԱՂԸ,
ԶՄԻՆԻՆՔ: ՅԱՄՍՏԵԱՆ, ՀԱՍՏԵՐԻ 24. 1862